ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1963 Общественные науки

Գ. Հ. Գրիգորյան

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Մեսրոպ Թաղիադյանը (1803—1858)[1] նոր ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի ձևավորման պատմության մեջ նշանակալից և ուրույն դեր է կատարել։ Նա յոթ տարի խմբագրել ու հրատարակել է պարբերական մամուլ («Ազգասէր» և «Ազգասէր Արարատեան»)՝ ակտիվ կապ պահպանելով մի շարք հայկական մտավոր-կուլտուրական կենտրոնների հետ, մեծ սիրով իրեն նվիրել է մանուկ սերնդի դաստիարակության գործին, գրել է գեղարվեստական և գիտա-պատմական գործեր, որոնցում արծարծել է հայ հասարակության հուզող պատմական-քաղաքական, էսթետիկական, մանկավարժական հասարակական, փիլիսոփայական և այլ հարցեր։

Թաղիադյանի աշխատությունները ու հոդվածները չեն կրում տեսական-փիլիսոփայական բնույթ։ Նա բարձրացնում էր այնպիսի հարցեր, որոնք առաջադրում էր հայ կյանքը և որոնք անմիջականորեն առնչվում էին հայ ժողովրդի տնտեսության ու կուլտուրայի հետագա վերելքի խնդիրների հետ։ Տեսական-փիլիսոփայական պրոբլեմները Թաղիադյանի աշխատություններից բխում են հիմնականում որպես հետևություններ, որոնք նրա գործերում հասարակական-քաղաքական հարցեր շոշափելիս ելակետային սկզբունքների դեր են կատարել։

Թաղիադյանը հայ այն մտավորականներից ու հասարակական գործիչներից էր, որոնց բնորոշ է ֆեոդալա-կղերական մտայնությունից բուրժուա-լուսավորչական աշխարհըմբռնմանն անցնելու երկվությունը։ Հիմնականում խորտակելով ֆեոդալա-կղերական պատկերացումների շղթաները և բազմաթիվ հարցերում հանդես գալով լուսավորչական, ժամանակի համար առաջավոր գաղափարներով, նա միաժամանակ ցուցաբերում է անհետևողականություն և տարբեր խնդիրներում ավելի կամ պակաս չափով մնում է կապված անցյալի մտածողության հետ։

Թաղիադյանի աշխարհայացքի ամենաբնորոշ գիծն այն է, որ նա հանդես էր գալիս հասարակության զարգացման, տնտեսության, կուլտուրայի ու գիտության առաջընթացի ամենաջերմ ու կրքոտ պաշտպանությամբ։ Որպես լուսավորիչ, նա այն տեսակետին էր, թե հասարակության առաջադիմության հիմնական կովանը լուսավորությունն է։ Նման իդեալիստական ըմբռնման հիմքն այն է, որ Թաղիադյանը հասարակական-պատմական երևույթները մեկնաբանում էր ոչ թե հասարակության նյութական կյանքի պայմաններով, այլ ձգտում էր բացատրել մարդկանց գիտակցությամբ, նրանց զարգացման մակարդակով՝ վերջին հաշվով գաղափարներով։ Նա եվրոպական մի քանի ազգերի, հատկապես անգլիացիների, տնտեսական-քաղաքական վերելքն ու հզորությունը պայմանավորում էր սոսկ գիտության ասպարեզում նրանց ձեռք բերած նվաճումներով։ «Ի՞նչայ,— գրում էր նա.— առով Անգղիա բոլոր երկրի փառքնայ դարձել, ո՛չ եկամտներեան, և ո՛չ աշխարհի պրկութիւնն, ո՛չ մարդկանց շատութիւննայ և ո՛չ հարստութիւնն, ո՛չ զէնքն և ո՛չ զինուորների ույժն և ո՛չ էլ յաղթանակութիւնների նշանները, փառքն, պատիւն և կամ պարգևքն. այլ նորա հարկ գերագոյն և արդագան գիտութիւն և խելքնա...»[2]։ Նման բացատրությունը, չնայած իր իդեալիստական բնույթին, հասարակական-պատմական երևույթների կրոնա-պրովիդենցիալիստական ըմբռնման համեմատությամբ մի քայլ էր առաջ։

Հասարակության բարեկեցությունը պայմանավորելով լուսավորությամբ, Թաղիադյանը կարծում էր, որ հայ ժողովրդի թշվառությունների, նրա սոցիալ-տնտեսական հետամնացության պատճառը լուսավորության ցածր մակարդակն է։ Ուստի նա իր հասարակական գործունեության հիմնական նպատակն էր համարում հայ ժողովրդի կրթության ու դաստիարակության գործին ծառայելը։

---

1 Թաղիադյանի կյանքի ու հասարակական գործունեության մասին տե՛ս Ռ. Նանումյան. Մեսրոպ Թաղիադյանի կյանքն ու գործը, Երևան, 1947։

2 «Ազգասէր», 1846, № 41, էջ 168։

Թաղիադյանը մերժում էր այն ամենը, ինչ նրա կարծիքով արգելակում է հասարակության մեջ արդարության ու հավասարության թագավորությանը, խոչընդոտում է նրա տնտեսական ու կուլտուրական վերելքին։ Հենց այս առումով էլ նա դեմ էր ֆեոդալական մասնատվածությանը, ֆեոդալական-միապետական կարգերին ու հանդես էր գալիս ճորտատիրության սուր քննադատությամբ։

Հայաստանը 19-րդ դարի 30—40-ական թվականներին, այսինքն՝ այն ժամանակ, երբ ստեղծագործում էր Թաղիադյանը, գտնվում էր Թուրքական բարբարոսական տիրապետության և ցարական Ռուսաստանի իշխանության ներքո։ Բարձր գնահատելով հյուսիս-արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական ակտը, որպես պարսկական բռնակալությունից հայ ժողովրդին ազատագրելու, նրան ֆիզիկական բնաջնջումից փրկելու և Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար նախապայմաններ ստեղծելու այն ժամանակ միակ ուղի, այսուամենայնիվ, Թաղիադյանը դեմ էր Ռուսաստանի հասարակական-քաղաքական կարգերին։ Սուր քննադատելով Անգլիայի գաղութային քաղաքականությունը Հնդկաստանում, նա գրում էր. «Եւ չիցէ այս բռնաբարութիւն ի ծայրագոյն աստիճանի, անտանելի ևս քան զմուժիկութիւնն Ռուսաստանի, և զկեղեմանս Պարսից»[3]։

Թաղիադյանը իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» երկում, նկարագրելով Վրաստանում իշխող ֆեոդալական-ճորտատիրական կարգերը, զայրույթով է խոսում նրանց մասին[4]։ Նա հանդես էր գալիս անհատի քաղաքական ազատության պահանջով։ «Եթե ազատ օրենք և ազատ կեանք չիցէ նոցա, այնպիսի որ ուրեմն համարեն ծնեալ ի բանտ և մեռանել ի բանտի»[5],— գրում էր նա։ Ֆեոդալական-միապետական, ճորտատիրական կարգերի պայմաններում, մտածում էր Թաղիադյանը, ամենուրեք ոտնահարվում են մարդկանց իրավունքները և հասարակության մեջ չի պաշտպանվում մարդկանց քաղաքական հավասարության սկզբունքը։

Անհաշտ էր Թաղիադյանի վերաբերմունքը նաև Թուրք-պարսկական հետամնաց իրավակարգի նկատմամբ, ուր առավել ևս բացառվում էին մարդու իրավունքները և իշխում էին բացարձակ կամայականությունն ու անօրինականությունը։ Նա անդրադարձել է արևելյան բռնակալական կարգերում ապրող ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի տնտեսական բայքայման հարցերին։ «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ, նկարագրելով 20-ական թվականների գյուղացու տնտեսությունը, նա ցույց է տալիս, թե ինչպես բազմատեսակ հարկերը, խանական բռնությունները ու կամայականությունները քայքայել են գյուղացու տնտեսությունը, ենթարկելով նրան անսահման զրկանքների[6]։

Թաղիադյանը հանդես էր գալիս Հայաստանում նոր, օրինականության վրա հիմնված կարգերի ստեղծման գաղափարով։ Այս խնդրում նա մեծ հույսեր էր կապում հայ բուրժուական խավերի հետ և առաջ էր քաշում հայ բուրժուազիայի տնտեսական և քաղաքական հզորացման հարցը։ Իր մամուլում տպագրած հոդվածներում, նա հայ վաճառականներին կոչ էր անում բնկերություններ կազմել և արտադրական լայն գործունեություն ծավալել։ Ուշագրավն այն է, որ Թաղիադյանը գաղութահայ վաճառականներից պահանջում էր գործարաններ հիմնել ոչ թե օտար երկրներում, այլ մայր հայրենիքում՝ տեղափոխելով այնտեղ իրենց կապիտալները[7]։ Թաղիադյանը հավատում էր, որ ուժեղացած հայ բուրժուազիան կարող է մեծ օժանդակություն ցույց տալ, և՛ ոչ միայն օժանդակություն ցույց տալ, այլև ինքը հանդիսանալ Հայաստանի տնտեսական ու կուլտուրական վերելքի գործնական կրողը։

Ժխտելով ֆեոդալական կարգերը, Թաղիադյանը հասարակության վերափոխման խնդիրը առաջ քաշում։ Այն բոլոր քաղաքական միջոցառումները, հասարակական փոփոխությունները, որ Թաղիադյանը ձգտում էր իրագործված տեսնել Հայաստանում, իրենց բովանդակությամբ բուրժուական էին, օբյեկտիվորեն նպաստում էին բուրժուական հարաբերությունների հետագա զարգացմանը, սակայն Թաղիադյանն արդեն մասամբ տեսնում էր այն հակասությունները, որ բերում էր իր հետ նոր հասարակարգը։ Նա տեսնում էր, որ այն հիմնված է փողի վրա, որ այնտեղ փողով ամեն ինչ գնվում ու վաճառվում է և որ ազատության ու հավասարության սկզբունքները ամեն քայլափոխին ոտնահարվում են։ Թաղիադյանը քննադատում է փողի, հարստության վրա հիմնված բարոյականությունը։ Այս կապակցությամբ,

---

3 «Ազգասէր Արարատեան», 1849, № 27, էջ 215 (ընդգծումն իմն է — Գ. Գ.)։

4 Տե՛ս Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 313—314։

5 «Ազգասէր», 1847, № 91, էջ 153։

6 Տե՛ս Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 226—227։

7 Տե՛ս «Ազգասէր», 1845, № 17, էջ 131։

«Օրինակ, նա գրում է. «Եթե մարդ փող ունենայ՝ ուր որ գնայ իր համար ընտանիք պակաս չեն... բայց եթե փող չունենայ, վայ իր խեղճ գլխին։ Թող անփող մարդն հեղ լինի և խոնարհ, կասեն՝ էն էշն ես ասում, որ բերանը խուփ նստածայ մնում մին տեղ առանց խոսելոյ։ Թող ճարտար լինի և բանիբուն՝ կասեն էն գիժն չես ասում, որ քամիայ կուլ տալման և խոսալով մարգայ գդուացնում։ Թող իրն մոռանայ և միայն Հայրենեացն ծառայի՝ կասեն ի հարկէ էշն որ կայ ստեղծվել այ, որ հարուանիքի ջուր կրի, ի՞նչ պարծանք իրնա»[8]։

Թաղիադյանը արդեն տեսնում էր, որ բուրժուական հասարակության մեջ ոտնահարվում են բարոյական բոլոր տեսակի նորմաները և փողը թափանցում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները, դառնում է պաշտամունք, ամենակարող ուժ։ Դասային արտոնությունների փոխարեն իշխում է փողը, նրանով գնվում ու վաճառվում են ազատությունը, արդարությունը։ Թաղիադյանն ասում էր. «Եվրոպական լրագիրները... կը սիրեն կաշառք առնուլ։ Բնաւ մի հաւատար լրագիրներուն, թե՛ այստեղ (Հնդկաստանում.— Դ. Դ.) և թե այնտեղ (Եվրոպայում— Դ. Դ.), թե նոցա մեջ ճշմարտութիւն կը գտնուի և կամ ըստ Աստուծոյ կը վարուին, ով որ արծաթ կը շռայլե, նոցա կը փչե զուռնա, և ով ոչ՝ թող քած շան պես ոռնայ, ահա այս է լրագիրների հանդեսը, եթե կամիս որևէ ատենի առջև արդարանալ, նախ լրագրոյ մորուսին և պեխին իւղ քսե և ապա փաստաբաններին, ապա թե ոչ սպասիր վերջին դատաստանին»[9]։ Որպես լուսավորության և քաղաքակրթության ջերմ քարոզիչ Թաղիադյանը բարձր էր գնահատում եվրոպական լուսավորությունը։ Սակայն, նա միաժամանակ հասկացավ, որ քաղաքակրթությունը իր հետ դեռևս իսկական ազատություն ու հավասարություն չի բերում։

Չնայած այս ամենին, Թաղիադյանը մնաց որպես բուրժուա-լուսավորիչ, դուրս չգալով լուսավորիչների կողմից հասարակության վերափոխման համար առաջադրված լոզունգների ու սկզբունքների շրջանակներից։

* * *

Հայ ժողովրդի հետագա առաջադիմության գլխավոր խնդիրը Թաղիադյանի առաջ բարձրացնում էր մի շարք հարցեր, որոնք բխում էին հայ ժողովրդի համար ստեղծված պատմա-քաղաքական յուրահատուկ պայմաններից։

19-րդ դարի 20-ական թվականների վերջերին Հայաստանի արևելյան մասը միացվեց Ռուսաստանին։ Այդ պատմական կարևորագույն ակտը ժամանակին ջերմորեն ողջունեցին հայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները և ամբողջ հայ ժողովուրդը։ Դրանց թվումն էր և Թաղիադյանը։ Հայտնի է Թաղիադյանի նամակը երևանցիներին, որը նա գրեց հեռավոր Հնդկաստանից՝ Ռուսաստանի կողմից Երևանը ազատագրելու կապակցությամբ՝ 1828 թ. նոյեմբերի 1-ին։

Սակայն պարսկական բռնակալության տակ գտնվող Հայաստանի մի մասի ազատագրումով դեռևս չլուծվեց Հայաստանի ազատագրության հարցը, բանի որ հայ ժողովրդի մեծ հատվածը դեռևս մնում էր թուրքական դաժան՝ հայ ժողովրդին բնաջնջումով սպառնացող, լծի տակ։

19-րդ դարի 30—40-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական մտքի մեջ Հայաստանի ազատագրության հարցը դարձյալ կարևոր տեղ էր բռնում։ Այն իր առաջ խնդիր էր դնում հայ ժողովրդի երկու հատվածների միացյալ ուժերի միջոցով և Ռուսաստանի հովանավորությամբ վերջնականապես ավարտել թուրք-պարսկական իշխանությունից Հայաստանի ազատագրումը և հայկական հողերի միավորումը։ Որպես ռուսական օրիենտացիայի ջերմ պաշտպան, Թաղիադյանը հայ ժողովրդի վերջնական ազատագրումը թուրքական լծից և հայկական հողերի միավորումը կապում էր Ռուսաստանի ռազմա-քաղաքական օգնության հետ։ Ելնելով պատմության փորձից, նա համոզված էր, որ միայն Ռուսաստանը կարող է հանդիսանալ թուրքական բռնակալությունից Հայաստանի ազատագրողը։

Այն հանգամանքը, որ հայ ժողովրդի մեծ հատվածը դեռևս գտնվում էր Թուրքիայի իշխանության տակ, իսկ հայ ժողովրդի մի զգալի մասը, չկարողանալով տանել օտարերկրյա ծանր լուծը, գաղթել էր Հայաստանից և բնակություն հաստատել Եվրոպայի և Ասիայի

---

8 «Ազգասէր», 1847, № 91, էջ 151։

9 Հովհաննես Կ. Մկրյան, Կենսագրութիւն Մեսրոբայ Դաւթեան Թաղիադեանց Երևանցւոյ, Թիֆլիս, 1886, էջ 48։

բազմաթիվ երկրներում, բնականաբար մասնատել էր հայ ժողովրդին։ Հայ ժողովուրդը կանգնած էր ազգային հատկանիշները կորցնելու և օտար ժողովուրդների հետ ձուլվելու վտանգի առաջ։ Այս կապակցությամբ հայ ժողովրդի միասնության, հայ գաղութների փոխադարձ կապի և համագործակցության, ազգային կուլտուրայի և լեզվի պահպանման հարցերը հայ հասարակական կյանքի կարևոր խնդիրներից էին։

Թաղիադյանը իր մամուլի էջերում տարբեր առիթներով շատ անգամ է բարձրացնում այս հարցերը։ Նկատի ունենալով տարբեր աշխարհամասերում առաջացած հայ գաղութները, նա գրում է. «Ազգային կապակցութեան պետս ունիմ, եղբայրք, և ազգային գործակցութեան՝ առաւել ևս»[10]։ Թաղիադյանը ոչ միայն գաղութահայության կապ էր պահանջում, այլև առաջ էր քաշում համագործակցության գաղափարը։ Նա գտնում էր, որ փոխադարձ կապի հիմնական նպատակը համագործակցությունն է։ Թաղիադյանը չափազանց կարևոր խնդիր էր համարում օտար երկրներ գաղթած, ինչպես և Թուրքիայում գտնվող հայ մասսաների մեջ պահպանել հայոց լեզուն, հայ ժողովրդի սովորույթները՝ ձգտելով դրանով իսկ ընդդիմանալ հայ ժողովրդի տարրալուծմանը այն ժողովուրդների հետ, որոնց մեջ նա ապրում էր։

Լեզուն Թաղիադյանը համարում էր ազգի կարևոր հատկանիշներից մեկը, եթե ոչ ամենակարևորը։ Այս իսկ պատճառով, նա գտնում էր, որ ազգը պահպանելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է պահպանել լեզուն, «Առաջին և մեծ հոգ ազգին պատտի լինել ի վերայ ազգային լեզուին, ապա թե ոչ՝ ընդե՞ր վատնումն այսքան ազգային հանգանակութեանց»[11],— գրում է Թաղիադյանը։ Տպագրելով «Ազգասէրում» «Արարատեան ընկերութեան» աշքի ընկնող անդամներից մեկի՝ Թադեոս Խան Ավետումյանի «Ի վերայ ազգային առաջադիմութեան» հոդվածը, որտեղ վերջինս շատ այլ հարցերի հետ միասին զարգացնում էր այն միտքը, թե «Ներկայ ես ժամանակումն մեր ազգութեան ապացոյց և նշանն միայն մեր լեզուն է, եթե այն ևս միջիցն բառնանք էլ հայ չենք», և՝ «Եթե հայոց միջիցն հայկական լեզուն բառնանք, ազգին վերաբերելի բոլոր սովորութիւնքն յետոյ մեր աշքին վատ կերևան, համազգի եղբարք միմեանց կբանդվին, կրաժանվեն»[12], Թաղիադյանն իր համախոհությունն է արտահայտում հոդվածում արծարծված այս հարցերի նկատմամբ։ Առանձին հոդվածում ամփոփելով Ավետումյանի կողմից առաջ քաշված մտքերը, նա գրում է. «Հայոց լեզուն հարկավոր ա վասն ազգի պահպանության... իրավապես և ճշմարտապես մին ազգի ազգության նշանն յուր լեզուն ա... շատ հարկավոր այ լեզուն վասն պահպանության Ազգությանն»[13]։

Ապրելով և գործելով Հնդկաստանում Թաղիադյանը տեսնում էր, որ հնդկահայերը կորցնում են իրենց լեզուն, ազգային սովորույթները ու տրադիցիաները։ Այս երևույթի առաջն առնելու համար, նա գտնում էր, որ ամենից առաջ անհրաժեշտ է պահպանել հայոց լեզուն։ Իր պարբերականի էջերում Թաղիադյանը քննադատում և պայքար էր մղում Կալկաթայի և Հնդկաստանի հայ այլ գաղութներում ախտ դարձած օտարամոլության դեմ։

Սակայն, որ լեզուն պետք է դառնա համազգային լեզու գրաբարը, թե՞ աշխարհաբարը։ Այս հարցը, որը հայ հասարակական կյանքում պայքարի առարկա էր դարձել, բաժանելով հայ մտավորականությանը երկու բանակի, հուզել է և Թաղիադյանին։ Եթե Թաղիադյանին ժամանակակից Արովյանը վճռականորեն կանգնեց աշխարհաբարի դիրքերում, ապա Թաղիադյանը խորը տատանումներ էր ապրում։

Թաղիադյանը գիտակցում էր, որ աշխարհաբար գրելու դեպքում նա պետք է հիմք ընդուներ որևէ բարբառ, բայց ո՞ր բարբառը ընտրել, որ հասկանալի լինի հայ ամբողջ ժողովրդին։ Սկզբում նա ընտրում է Ջուղայի բարբառը, եթե կարելի է այսպես ասել՝ Ջուղայի աշխարհաբարը, բայց այն փաստը, որ յուրաքանչյուր կայմավորվող հայ կուլտուրական օջախում սկսում է տարբեր բարբառներ իշխել, մի հանգամանք, որը, ըստ Թաղիադյանի, ջլատում է հայ միասնական լեզուն՝ հայ ազգային լեզվի մեջ ամրապնդելով բազմաբարբառությունը, ու միաժամանակ բացասաբար անդրադառնում տարբեր վայրերի հայ կուլտուրական կենտրոնների փոխհամագործակցության վրա, նրան բերում է այն համոզման, թե անհրաժեշտ է անցնել գրաբարին։ Պաշտպանելով գրաբարը, Թաղիադյանը, սակայն, միշտ աշխատում էր պարզեցնել այն՝ օգտագործելով նաև բարբառային արտահայտություններ։

---

10 «Ազգասէր», 1847, № 121, էջ 385։

11 «Ազգասէր», 1847, № 109, էջ 292։

12 Նույն տեղում, 1845, № 4, էջ 29։

13 Նույն տեղում, № 14, էջ 110—111 (ընդգծումն իմն է— Գ. Գ.)։

19-րդ դարի սկզբներից գրաբարի և աշխարհաբարի հարցը այն կարևոր հարցերից մեկն էր, որի շուրջը բախվում էին հայ հասարակության առաջադեմ և հետադեմ ուժերը։ Գրաբարի պաշտպանությամբ հանդես էին գալիս հիմնականում հայ հասարակության կղերա-ֆեոդալական խավերը, որոնք գրաբարի մեջ տեսնում էին Աստվածաշնչի լեզուն։ Գրաբարի պաշտպանությամբ նրանք աշխատում էին պաշտպանել ֆեոդալական կարգերն ու ֆեոդալական-կղերական գաղափարախոսությունը և բոլորովին անտեսում էին ժողովրդական մասսաների պահանջներն ու շահերը։ Թաղիադյանը միանգամայն այլ դիրքերից էր մոտենում գրաբարի հարցին։

Աշխարհաբար, թե՞ գրաբար հարցը քննելիս, Թաղիադյանին ամենից առաջ մտահոգում էր այն հարցը, թե որ լեզվով ավելի հեշտ կլինի համազգային խնդիրներ լուծել՝ հայ ժողովրդական մասսաների մեջ լուսավորություն տարածել, նրան ծանոթացնել իր պատմական անցյալի հետ, վառ պահել նրա մեջ ազգային ոգին և միավորել հայ ժողովրդին։ Հակադրվելով կղերա-ֆեոդալական խավերին, Թաղիադյանը գրաբարը աշխատում էր ծառայեցնել ժողովրդական մասսաների շահերին, իր կարծիքով որպես հասարակական-քաղաքական գաղափարներ պրոպագանդելու համազգային միջոց։ Թաղիադյանը հիմնովին չգիտակցեց, որ գրաբարը չի կարող այդպիսի միջոց լինել, որ այն արդեն սպրել է իր դարը։ Նա չհասկացավ, որ աշխարհաբարը այն միակ լեզուն է, որով կարելի է խոսել ժողովրդի հետ։

Թաղիադյանի հասարակական-քաղաքական նպատակների և լեզվի հարցում գոյություն ունեցող այս հակասությունը ճիշտ է նկատել Նալբանդյանը։ Նա իր զարմանքն է արտահայտել այն բանի նկատմամբ, որ Թաղիադյանը չի հասկացել ու զգացել այդ հակասությունը։ «Ինձ,— գրում է Նալբանդյանը,— շատ ծանր է թվել Թաղիադյանցը այն հայերի կարգում, որ մտածում էին մեռյալը գործիք շինել, ժողովրդի մեջ կյանք ներս բերելու համար»[14]։

* * *

Թաղիադյանը կանգնած էր այն տեսակետի վրա, թե ազգի պահպանման, հայ ժողովրդի ասիմիլյացիայի առաջն առնելու համար լեզվի հետ միասին զգալի դեր կարող է խաղալ նաև ազգային կրոնը։ Ըստ նրա, ազգային կրոնական ավանդությունները կարող են պատվար հանդիսանալ հայ ազգի այլ ազգերի հետ տարրալուծվելու դեմ։ Ուստի իր թերթի միջոցով նա պայքար էր մղում ոչ միայն թուրքական ասիմիլյատորական քաղաքականության, այլև օտարերկրյա այն պետությունների դեմ, որոնք, ձգտելով ուժեղացնել Թուրքիայի մոտ իրենց տնտեսական ու քաղաքական տիրապետությունը, ամեն կերպ աշխատում էին իրենց ազդեցության տակ առնել Թուրքիայում ապրող քրիստոնյա ժողովուրդներին, հատկապես հայ ժողովրդին՝ այդ նպատակին ծառայեցնելով կրոնը։ Այս տեսակետից Թաղիադյանի պայքարն ամենից առաջ ուղղված էր ընդդեմ Անգլիայի, Ֆրանսիայի և Ամերիկայի, այդ երկրների կապիտալիստական շրջանների, որոնք, իրենց ազդեցության տակ վերցնելով հայ ժողովրդին, կասեցնում, արգելակում էին նրա քաղաքական համախմբումը և ազգային ինքնորոշումը։

Քննադատելով անգլիական և ֆրանսիական միսիոներական ընկերությունների երկպառակիչ գործողությունները հայ ժողովրդի մեջ, Թաղիադյանը ամերիկյան միսիոներների մասին «Ազգասէր»-ի էջերում գրում է. «Ոչ պակաս ի սոցանէ են և կարգք միսիոներաց, յորոց մին կոչեալ Ամերիկեան՝ տխրութեամբ ծանուցանեմք, արդեն սկսեալ և խարբալեր զմիամիտ Ազգ մեր, որ ի կողմանս Թուրքեստանու։

«Այլ՝ ով տարաբաղդութեանս,— բացականչում է Թաղիադյանը,— ժամանեալ եմք արդյոք սրեր, որ նորածին ազգք անգամ համարձակին սպրդիլ մտանել ի փարախս մեր անմեղ գառանց»[15]։

Հայ հասարակական-քաղաքական մտքի պրոգրեսիվ ներկայացուցիչները ոչ միայն 40-ական, այլև հետագա ժամանակաշրջանում ևս պայքար էին մղում օտարերկրյա միսիոներական այդ ընկերությունների դեմ, քննադատում ու մերկացնում էին նրանց բուն նպատակները։ Դրանց թվում էր նաև Միքայել Նալբանդյանը։

Թաղիադյանը ոչ միայն կասկածի տակ չի դրել հայ եկեղեցու գոյության հարցը, այլև առանձին նշանակություն էր տալիս հայ եկեղեցու պատմական դերին։ Նա գտնում էր, որ

---

14 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 275 (ընդգծումը իմն է—Գ. Գ.)։

15 «Ազգասէր», 1845, № 11, էջ 83։

այժմ ես հայ եկեղեցին դեր ունի կատարելու հայ ժողովրդի համախմբման, նրա լեզվի և ազգային սովորույթների պահպանման գործում։ Ըստ Թաղիադյանի, այն պայմաններում, երբ հայ ժողովուրդը ցրված է աշխարհով մեկ և ապրում է տարբեր ժողովուրդների մեջ, հայ եկեղեցին այն կազմակերպություններից մեկն է, որը պետք է իր վրա ստանձնի ցրված ժողովրդին համախմբելու և հայրենիքի հետ կապելու պարտականությունը։ Սակայն Թաղիադյանը քննադատում էր հոգևորականներին, ծաղրում նրանց տգիտությունը, նրանց ուսուցած սխոլաստիկ գիտությունը, առանձին հոգևորականների այլանդակ վարքը, ագահությունը, կաշառակերությունը և այլն։ Թաղիադյանի առաջին կենսագիրը՝ Կալկաթայի հայոց թեմի առաջնորդ Խաչկյանը, որը Թաղիադյանին ժամանակակից էր, տեսել ու խոսել էր նրա հետ, 1870 թ. հրատարակած կենսագրական ակնարկում այսպես է բնորոշում Թաղիադյանի վերաբերմունքը դեպի հոգևորականները «Եկեղեցականների հետ հաղորդակցել չէր սիրեր, մանավանդ կուսակրոնների հետ։ Լակաւ բացառութեամբ... սոքա երբ առաջնորդ կարգուին, կասեր, հնտներին ուրիշ բան չեն տաներ, բայց եթե ապականել բարք, դատարկ քսակ, անճոռնի խիզախանք, անկուշտ որովայն և իզձ՝ գանձ դիզելու որով և իցե եղանակաւ, վայ որոց հանդիպին... Ինչի՞ համար ես աշխարհական դարձա, կը կրկներ,— հոգիս և մարմինս փրկելու համար»[16]։

Թաղիադյանը պարզ տեսնում էր հոգևորականության պարազիտային բնույթը։ Իր հասարակական գործունեության ամեն քայլափոխին հանդիպելով նրանց խավարամտությունից ու տգիտությունից բխող արգելակիչ գործունեությանը և ենթարկվելով նրանց հալածանքներին, Թաղիադյանը թշնամանքով էր լցված նրանց նկատմամբ։ Սակայն նա բացահայտ գաղափարական պայքար չի մղել եկեղեցու դեմ և հոգևորականության նրա քննադատությունը չի շոշափել եկեղեցու գոյության հարցը։ Եվ այդ ոչ միայն այն պատճառով, որ նա կարծում էր, թե եկեղեցին պետք է հայ ժողովրդին համախմբող, այդությունը պահպանող հաստատություններից մեկը լինի, այլև այն պատճառով, որ այն ժամանակներում, ինչպես Հնդկաստանի, այնպես էլ այլ երկրների հայ գաղթավայրերի ժողովրդական մասսաները դեռևս կապված էին եկեղեցու հետ, համախմբված էին նրա շուրջը և տրադիցիոն կապեր ունեին եկեղեցու մայր աթոռի՝ Էջմիածնի հետ։ Այս հանգամանքը չէր կարող անտեսել Թաղիադյանի նման մի գործիչ։ Անտեսել, կնշանակեր իր դեմ լարել ոչ միայն հայ իրականության մեջ դեռևս մեծ կշիռ ունեցող եկեղեցին, այլև մասամբ հայ համայնքը։ Այս հանգամանքը նկատի առնելով, նա եկեղեցու քննադատության հարցում զգուշավոր քաղաքականություն էր վարում։

Ըստ Թաղիադյանի, որպեսզի եկեղեցին կարողանա կատարել հայ ժողովրդին համախմբողի, ազգությունը պահպանողի գերը և լինի իր արժանի բարձրության վրա, այն պետք է ռեֆորմի ենթարկվի։ Եկեղեցին պետք է զեկավարվի ոչ թե հոգևորականների կամային իշխանությամբ, այլ ունենա իր «կանոնները», ընդունված և հաստատված համայնքի անդամների կողմից և խստորեն պարտագիր հոգևորականների համար։ Իր կողմից նա առաջադրում էր այդպիսի կանոնագիրք՝ տպագրելով Մանուկ Զորաբյանի՝ Նոր-Ջուղայի վանքի, նրա միաբանների և եկեղեցու առաջնորդների համար գրված կանոնները[17]։ Այս կանոնագիրքը ուշագրավ է այն տեսակետից, որ առաջ է քաշում համատեղ զեկավարման, ընդհանուր ընտրության և ժողովրդի առաջ հաշվետու լինելու սկզբունքները։

Զորաբյանի կողմից առաջադրվող կանոնների նպատակն էր սահմանափակել եկեղեցու և հոգևորականության կամայական իշխանությունը հայ հասարակության վրա։ Այդ կանոններն որոշ իմաստով ուղղված էին կղերա-ֆեոդալական խավերի դեմ և արտահայտում էին հայ բուրժուական առաջավոր ինտելիգենցիայի ձգտումները։ Թաղիադյանը, հանդես գալով այդ կանոնների պաշտպանությամբ[18], աշխատում էր, որ եկեղեցին բարձր կանգնած չլինի հասարակությունից, որ հասարակությունը կարողանա հսկողություն սահմանել նրա վրա՝ ծառայեցնելով այն իր շահերին ու խնդիրներին։ Թաղիադյանը ձգտում էր եկեղեցին ենթարկել հասարակական կյանքի պահանջներին, սահմանափակել նրա իրավունքները և դրանով իսկ պայմաններ ստեղծել հասարակական-քաղաքական մտքի հետագա աշխարհականացման

---

16 Հովհաննես Կ. Մկրյան, Կենսագրութիւն Մեսրոբայ Դավթեան Թաղիադեանց Երևանցւոյ, էջ 47—48։

17 Տե՛ս «Ազգասէր Արարատեան», 1848, № 20։

18 Եկեղեցու վերաբերյալ Զորաբյանի կանոններում բարձրացված հարցերին Թաղիադյանը անդրադարձել է նաև առանձին առաջնորդող հոդվածում, լիովին արտահայտելով իր համերաշխությունը նրանց հետ։ Տե՛ս «Ազգասէր Արարատեան», 1848, № 23, էջ 177—179։

համար։ Այս է Թաղիադյանի եկեղեցու վերափոխման, ռեֆորմի հիմնական բովանդակությունն ու էությունը։ Թաղիադյանը մտածում էր, որ միայն այդպիսի պարագաներում եկեղեցին և հոգևորականությունը կկարողանան կատարել այն միսիան, որ հայ հասարակությունը պատմական տվյալ էտապում դնում էր նրանց վրա։

* *

Հայ հասարակության հետագա զարգացման խնդիրը Թաղիադյանը սերտորեն կապում էր ինչպես բնաշխարհում ապրող, այնպես էլ աշխարհի զանազան երկրներ գաղթած մասսաների կրթության, կուլտուրական մակարդակի բարձրացման, բարոյական դաստիարակության հետ։ Այս կապակցությամբ նա ամբողջ հասակով բարձրացնում էր ազգային դպրոցի, մանուկ սերնդի դաստիարակության, կնոջ էմանսիպացիայի, անցյալի ժառանգությունից և ժամանակակից եվրոպական կուլտուրայից օգտվելու և այլ հարցեր։

Թաղիադյանը կանգնած էր այն տեսակետի վրա, թե մարդու մեջ ինչպես բարոյական, այնպես էլ անբարոյական հատկանիշները դաստիարակության, միջավայրի արդյունք են։ Նա ժխտում էր բարոյական հատկանշների, ինպես նաև գիտելիքների բնածին լինելու ռեակցիոն իդեալիստական ուսմունքները և գտնում էր, որ մարդը ի ծնե չունի իր մեջ բացասական կամ դրական հատկանիշներ. դրանք մարդու մեջ առաջանում են աստիճանաբար, և այդ գործում, ըստ Թաղիադյանի, վճռական դեր է կատարում դաստիարակությունը։ Ելնելով որանից, նա գտնում էր, որ մի ազգի բարոյականությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մանուկ սերնդի դաստիարակության վրա։ «Երբ որ մի ազգի կկամենաս աւելի օրինաւոր կարգի բերել և դաստիարակութեան գեղեցիկ պտղովք զարդարել,— գրում է Թաղիադյանը,— հարկաւոր է, որ այնքան մեծերի վերայ չաշխատես, որքան որ ջանաս մանկանց օրինաւոր ճանապարհով մեծացնես»[19]։ «Ամեն ազգի երջանկութիւնն հիմն մանկանց ուսումնայ»[20],— պնդում է նա։

Հասարակության հետագա պրոգրեսի տեսակետից, Թաղիադյանը մեծ հույսեր էր կապում ընտանիքի հետ։ «Ամենայն մարդ կփափագի, որ իւր ազգն ծաղկի քաղաքականութեամբ, գիտութիւնամբ և ամենայն տեսակ առաքինութեամբ և ահա, զայն բան հեշտացնողքն կամ դժուարացնողքն առաջինն ծնողքն են»[21], գրում է Թաղիադյանը։ Այս կապակցությամբ նա զայրույթով է արտահայտվում Արևելքում կնոջ ստրկական վիճակի մասին և ամբողջ հասակով բարձրացնում է կնոջ ազատության պրոբլեմը։ Նա գրում է, որ հայերը «ընդ որմովք և վարագուրօք» են պահում հայ կնոջը «զրկելով յամենայն կենցաղոգուտ և պիտանի գիտութեանց»[22]։ Իր աշխատություններում և հոդվածներում նա բազմիցս անդրադառնում է կնոջ ազատության պրոբլեմին։ Դեռևս 1828 թ. երևանցիներին գրած իր նամակում, նա կնոջը ընտանիքի հոգսերից, ընտանիքի չորս պատերից դուրս բերելու և նրան հասարակական կյանքի բնագավառ ներգրավելու հարց էր դնում[23]։

Կնոջ հասարակական դերի, նրա էմանսիպացիայի հարցը հնդկահայ գաղութի (ե ոչ միայն հնգկահայ գաղութի) համար կարևոր հարցերից մեկն էր։ Պատահական չէ, որ «Արարատյան ընկերությունը» «Ազգասէրի» միջոցով նվեր (100 ռուբլի) է խոստանում նրան, ով կգրի «Ճառ ինչ ի վերայ դաստիարակութեան օրիորդաց Հայկազանց»[24]։ Թաղիադյանը ինքն է ձեռնարկում այդ գործը և շուտով գրում է՝ «Ճառ դաստիարակութեան օրիորդոց» մեծածավալ հոդվածը, որը հետագայում հրատարակում է նաև առանձին բրոշյուրով։ Այստեղ նա, քննադատելով կնոջ ստրկական, կաշկանդված վիճակը, հանդես է գալիս կնոջ հավասարության, էմանսիպացիայի պաշտպանությամբ։ Նա հարց է դնում, որ կինը անպայման ուսում ստանա, գրագետ ու կրթված լինի, քանի որ նա ապագա սերնդի դաստիարակն է և հատկապես մեծ դեր ունի կատարելու սերնդի բարոյական դաստիարակության գործում։

Կնոջ էմանսիպացիայի հարցին Թաղիադյանը մոտենում էր հայ իրականության կոնկրետ պայմաններին համեմատ։ Նա կնոջ լուսավորվելու մեջ տեսնում էր հայ ժողովրդի ազ-

---

19 «Ազգասէր», 1846, № 25, էջ 39։
20 «Ազգասէր», 1846, № 39, էջ 160։
21 «Ազգասէր», 1846, № 26, էջ 39։
22 Մ. Թաղիադյան, «Ճառ դաստիարակութեան օրիորդաց», Կալկաթա, 1847, էջ 61։
23 Մկրյան, Կենսագրութիւն Մեսրոբայ Դաւթեան Թաղիադեանց Երևանցւոյ, էջ 137։
24 «Ազգասէր», 1845, № 13, էջ 104։

գային վերածնության նախապայմաններից մեկը, Հայաստանը օտարերկրյա բռնակալությունից ազատագրելուն օժանդակող հանգամանքներից մեկը։ Այսպես, առարկելով նրանց, որոնք ծաղրելով Հայաստանի ազատագրության խնդրում կնոջ դերի հարցը, ասում էին, թե թող տղամարդիկ տանը նստեն, իսկ կանայք զենք վերցնեն և պատերազմի դուրս գան, Թաղիադյանը գրում է. «Օրիորդաց մերոց չպիտին արտաքին զեն ք, այլ ներքին ոգւոց արիութիւն. որով կարող լինիցին ծնանիլ, սնուցանել և հասունացնել արս քաջս ի պաշտպանութիւն հայրենեաց, որով կարասցեն ի խռովութիւնս պատերազմաց անխռով և անվրդով զտունս կառավարել, արանց և ազգականաց իւրեանց առանձին կարևորօքն նպաստ հասուցանել, պատրաստ և պաշարաց նախատես և զգոյշ լինել...»[25]. և այլն։ Այսինքն՝ Թաղիադյանը պահանջում էր, որ կինը պատրաստ լինի հասարակական գործունեության և կարողանա փոխարինել տղամարդուն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտություն է առաջանում։

Թաղիադյանը շեշտում է կնոջ դերը ազգի լուսավորության բարձրացման գործում։ Նա գրում է. «Ազգի լուսավորութեան միտ դիք, որոյ հիմունքն են կանայք»[26]։ Որպես նոր սերնդի դաստիարակ, կինը մեծ անելիքներ ունի, իսկ նա կկարողանա կատարել հասարակության կողմից նրա վրա դրված պատասխանատու խնդիրն այն ժամանակ, երբ նա ինքը կունենա համապատասխան կրթություն։ Մատաղ սերնդին ազգային ոգով դաստիարակելու համար անհրաժեշտ է, որ կինը իմանա իր ազգի պատմությունը, լավ տիրապետի մայրենի լեզվին։ Ելնելով հայ կյանքի առանձնահատուկ պայմաններից, Թաղիադյանը գտնում էր, որ օտարամոլության արատը գաղութահայ ընտանիքներում ներս է թափանցում նաև այն պատճառով, որ հայ կինը կրթված չէ, նրա մեջ թույլ է ազգային ինքնագիտակցությունը, և նա չի կարողանում հայրենասիրության ոգով դաստիարակել իր որդիներին։ Երեխայի բնավորության մշակման գործում փոքր դեր չի խաղում ծնողի, տվյալ դեպքում հատկապես մոր, սնոտիապաշտությունը, նախապաշարված լինելը։

Նոր սերնդի դաստիարակության մյուս հիմնական օղակը, ըստ Թաղիադյանի, դպրոցն է։ Նա մերժում է տնային անհատական ուսուցման ձևը և գտնում է, որ դպրոցական ուսուցումը լավագույն ձևն է, քանի որ դպրոցը երեխայի մեջ դաստիարակում է պատասխանատվության, կոլեկտիվության, կարգապահության զգացմունք։

Թաղիադյանը դեմ էր միջնադարյան-կրոնական դպրոցներին։ Նա պահանջում էր ավելի մեծ ուշադրություն դարձնել «ազատական արվեստներին», ճշգրիտ բնական գիտություններին՝ մաթեմատիկային, ֆիզիկային, քիմիային, աշխարհագրությանը և այլն։ Թաղիադյանը ակտիվ պայքարում էր դպրոցների աշխարհականացման համար և քննադատում էր ուսման եկեղեցական-միջնադարյան դրվածքը։ «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ նա սրտի կսկիծով է նկարագրում եկեղեցական կրթության աղքատությունը, սահմանափակությունը և էջմիածնում ուսման դրվածքի արատավոր կողմերը[27]։

Թաղիադյանը հանդես էր գալիս նոր հիմունքներով ազգային դպրոցներ ստեղծելու պահանջով՝ նրանց հետ կապելով հայ ժողովրդի լուսավորության, ազգային կոնսոլիդացիայի հետագա հաջողության կարևոր խնդիրը։ Նա անհրաժեշտ էր գտնում, որ ամենուրեք, որտեղ կան հայ ընտանիքներ, դպրոցներ բացվեն և կրթությունը դարձվի համաժողովրդական գործ։ Միայն մի քանի բարեգործների օժանդակությամբ բացված դպրոցները չեն կարող լուծել այն կարևոր խնդիրը, որ դրվում է նրանց վրա։ «Մեր ազգը ոչ թե հինգ կամ վեցի, այլ հազարաւոր դպրոցների, վարժատանց և արհեստանոցաց հարկաւորութիւն ունի. քանզի մին ազգի համար հինգ կամ վեց կրթարաններն այնպես են, որպես մին կաթ անձրևն՝ մին մեծ ցամաք դաշտի, կամ որպէս մին ճրագի լոյս՝ բոլոր քաղաքի»[28],— կարդում ենք «Ազգասէրում»։

Ազգային դպրոցները պետք է կանխեն հայ ժողովրդի ստաբացման և ասիմիլյացիայի պրոցեսը։ «Քանզի դպրոց և այն ազգայինն է միայն, որ ուսուցանէ որդւոց քոց ուստերաց և դստերաց միանգամայն՝ զբարս, զբնաւորութիւն և զսեպհական յատկութիւն Ազգիդ։ Ոչ որ կարէ սիրել զայն՝ զոր ոչ ետես երբէք և ոչ լուաւ, ազգային դպրոցն է, որ ուսուցանէ որդւոց քոց զվճիտ պատմութիւն ազգիդ և վառէ զնոսա ի սէր հայրենեաց իւրեանց»[29],— գրում է

25 Թ ա ղ ի ա դ յ ա ն, «Ճառ դաստիարակութեան օրիորդաց», էջ 41—42։

26 «Ազգասէր», 1847, № 76, էջ 27։

27 Տե՛ս Ճանապարհորդութիւն ի Հայս, հատ. 1, էջ 111—114։

28 «Ազգասէր», 1845, № 11, էջ 88։

29 «Ճառ դաստիարակութեան օրիորդաց», էջ 43։

Թաղիադյանը։ Այսինքն՝ դպրոցը այն հաստատությունն է, որը պատվաստում է հայ մանուկ սերնդի մեջ ազգային գիտակցություն, տալիս է նրան գիտելիքներ ազգային պատմության, կուլտուրայի մասին, սովորեցնում է մայրենի լեզուն և այսպիսով կանխում է հայ ժողովրդի օտարացումը։ Եթե հայ մանուկները հաճախում են օտար դպրոցներ, ապա դրա հետևանքը լինում է այն, որ նրանք կտրվում են ազգային կրթությունից, օտարանում են և, աստիճանական ասիմիլյացիայի միջոցով, հայ ազգի ոչնչացման սպառնալիք է ստեղծվում։

Թաղիադյանը գտնում էր, որ հայ ժողովրդի կուլտուրական ու քաղաքական մակարդակը բարձրացնելու նպատակով պետք է լայն կերպով տարածել և պրոպագանդել եվրոպական ժողովուրդների կուլտուրական ու տնտեսական նվաճումները։ Հայ ազգի կուլտուրական վերելքի համար եվրոպականից օգտվելու հարցը իր ժամանակին հայ հասարակության կողմից բարձրացված կարևոր հարցերից մեկն էր։ Թաղիադյանի կողմից խմբագրվող մամուլում՝ «Ազգասէրում» և «Ազգասէր Արարատեանում» այն իր արժանի լուսաբանումն է գտել։ Ուսումնասիրելով այս կապակցությամբ նրա մամուլում տպագրված հոդվածները, մենք տեսնում ենք, որ հնդկահայ հասարակության մեջ այս հարցի շուրջը գոյացել էր հիմնականում երկու խմբավորում։ Ոմանք գտնում էին, որ հայ ժողովրդի կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար եվրոպական կուլտուրայից պետք է օգտվել առավելագույն չափով, որ պետք է հիմնվել եվրոպական կուլտուրայի վրա՝ մեծ զարկ տալով թարգմանություններին։ Թաղիադյանը և նրա համախոհները կանգնած էին այլ տեսակետի վրա։ Չանտեսելով եվրոպական կուլտուրայի պրոպագանդումը, նրանք գտնում էին, որ ազգայինը պետք է հիմք դարձնել հայ ժողովրդի կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում, որովհետև ազգայինը ավելի հարազատ է, ավելի մոտ է, ավելի հասկանալի է ժողովրդին։ Տպագրելով «Ազգասէրում» Բաթավիայից մի հայի (Բարեկամ կեղծանվան տակ) հոդվածը, Թաղիադյանը իր համերաշխությունն է արտահայտում հոդվածագրի հետ այն հարցում, թե անպայման պետք է օգտվել եվրոպական կուլտուրական նվաճումներից, սակայն առարկում է եվրոպականը հիմք ընդունելու նրա պահանջին։ «Զանազանութիւն միայն է,— գրում է Թաղիադյանը,— զի մեք ընտրեցաք մեզ զուղիղ հարթ՝ ախորժ զբոսանօք ի ծանօթից յանծանօթս վերանալ, իսկ նա՝ (հոդվածագիրը—Գ. Դ.) յանծանոթից ի ծանօթս իջանել»[30]։

Մոռացության տալ ազգային անցյալը, ըստ Թաղիադյանի, նշանակում է պայմաններ ստեղծել հայ ազգի օտարացման և ասիմիլյացիայի համար։ Ջուսումնասիրել ազգայինը, նշանակում է անտեսել և մոռանալ հայոց լեզուն, այսինքն՝ կորցնել, ըստ Թաղիադյանի, ազգային կարևորագույն հատկանիշներից մեկը։ Թաղիադյանը գիտակցում էր, որ միայն ազգային նախորդ մշակույթի յուրացման հիման վրա կարելի է բարձրացնել ազգային նոր կուլտուրան։

Եվրոպական կուլտուրան հայ ժողովրդի մեջ տարածելու նպատակով, Թաղիադյանը իր պարբերականի էջերում զգալի տեղ էր հատկացնում եվրոպական գրողների, պոետների ստեղծագործությունների թարգմանական հրատարակությանը։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ Թաղիադյանը եվրոպական հեղինակներից թարգմանություններ կատարում էր որոշ ընտրությամբ։ Նա իր մամուլի էջերում տպագրում էր այնպիսի հատվածներ, որոնք դատափետում էին սուտը, կեղծիքը, անարդարությունը, որտեղ արտահայտվում էին հումանիստական գաղափարներ, քննադատվում էին պորտաբույծները և համակրանքով էր խոսվում աշխատավոր մասսաների մասին։ Այս հանգամանքի վրա իրավացիորեն ուշադրություն է դարձրել Ա. Կարինյանը և այս առումով իր «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» ուշագրավ աշխատության մեջ քննել է «Ազգասէրում» և «Ազգասէր Արարատեանում» հրապարակված հոդվածները և նյութերը[31]։

Հայ ազգի կուլտուրական վերելքը Թաղիադյանը կապում էր հայ ունևոր խավերի օժանդակության հետ։ Նա տեսնում էր, որ հասարակության մեջ նրանք մեծ ուժ են ներկայացնում, ազդեցիկ են և միջոցներ ունեն «ընդհանրության» (իմա՝ հասարակության) լուսավորության գործը կազմակերպելու համար։ Հայ ազգի լուսավորության գործը առաջ տանելու համար պետք է հիմնել դպրոցներ, մամուլ, տպարան և այլն, իսկ դրա համար անհրաժեշտ են դրամական միջոցներ, որը կարող են տալ միայն հարուստները։ Ուստի, մտածում էր Թաղիադյանը, նրանց օժանդակությունից է կախված հայ հասարակության կուլտուրական վերելքը։

---

30 «Ազգասէր», 1847, № 112, էջ 319։

31 Տե՛ս Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, 1956, Երևան, էջ 311—318։

«Ուսումնականութիւն ազգիս ներկայ,—գրում է նա,—կախեալ կա զբարեհաճութիւնէ հարստաց ռմանց և բարեաց, որոց շնորհք որպէս շուշանք ի գարուն գրագիտութեան մերոյ, փոյթ ծաղկին և փոյթ թառամին»32։ Այսինքն՝ Թաղիադյանը հայ բուրժուազիայի օժանդակության հետ էր կապում հայ ազգի կուլտուր-տնտեսական զարգացման հետագա բախտը։ Այս, իհարկե, պատմական իրողության վրա հիմնված եզրակացություն էր, որը համապատասխանում էր այն ժամանակվա պատմական պայմաններին։ Փաստ է, որ Թաղիադյանի ժամանակաշրջանում հայ բուրժուազիայի հովանավորությամբ ու օժանդակությամբ էր հայ գաղթավայրերում և հայկական կուլտուրական կենտրոններում աշխուժացում ապրում հայկական տպագրությունը, մամուլը։ Հենց իրեն Թաղիադյանի խմբագրած «Ազգասէրն» ու «Ազգասէր Արարատեանը» իրենց գոյությամբ նշանակալի չափով արդյունք էին հայ բուրժուական խավերի աջակցության և հովանավորության։ Սակայն Թաղիադյանը հենց իր պարբերականի հրատարակության փորձով միաժամանակ համոզվում է, որ հայ հարուստները միշտ չէ, որ հոժարակամ և ակտիվ աջակցություն են ցույց տալիս ազգի լուսավորության գործին. «Ազգասէր Արարատեան»-ի վերջին համարներից մեկում, նա գանգատվում է, որ նրանք, զրկելով իրեն աջակցությունից, դրանով իսկ, վնաս են հասցնում «ընդհանրությանն» գործին։ Այսպիսով, նա ինքը տեսնում էր այն պատնեշը, որ գոյություն ուներ հայ հարուստների օժանդակության հետ իր կապած հույսերի և ռեալ իրականության միջև։ Առաջնորդողներից մեկում, երբ թերթի փակման սպառնալիքը ավելի ռեալ է դառնում, Թաղիադյանը ալեգորիկ իմաստով գրում է. «Գոչէր որդին դատապարտեալ առ անգութն նադիր շահ. Ոչ զիմ աչս հանես հայր, այլ զհամօրէն Պարսկաստանի»33։ Այս խոսքերն ուղղված են հայ հարուստների դեմ, որոնք զրկելով Թաղիադյանին օժանդակությունից ոչ թե նրան են հարված հասցնում, այլ ամբողջ հայ ժողովրդին։ Թաղիադյանը գիտակցում էր, որ հայ հարուստների համար հիմնականը իրենց սեփական շահն է, որովհետև նա տեսնում էր, որ հասարակության մեջ մարդ, վերջին հաշվով, գնահատվում է իր հարստությամբ։

Այսպիսով, ակնհայտ է, որ հայ ժողովրդի լուսավորության գործում բուրժուազիային տված դերի հարցում Թաղիադյանը որոշ տատանումներ էր ապրում և հակասական կարծիքներ էր արտահայտում։ Բուրժուազիային վերագրող դերի նկատմամբ նրա տատանումները հետևանք էին այն պրակտիկայի, որին նա հանդիպում էր իր ծրագրերը իրականացնելու ճանապարհին։ Թաղիադյանը, մի կողմից, ազգային լուսավորության գործում իր ամբողջ հույսը կապում էր հայ բուրժուական խավերի հետ ու ձգտում էր, որ նրանք դառնան այդ կարևոր գործի մեկենասներն ու ակտիվ կազմակերպիչները, իսկ, մյուս կողմից, տեսնելով նրանց վերաբերմունքն այդ խնդրին, հուսախաբ եղած երես էր դարձնում նրանցից ու քննադատական խոսքեր նետում նրանց հասցեին։ Սակայն, պետք է նշել, որ նրա քննադատությունն ավելի թույլ էր, քան հավատը բուրժուական խավերից սպասվող դերի նկատմամբ։ Բուրժուական խավերի՝ Թաղիադյանի քննադատությունը հետապնդում էր ավելի նրանց ուղղելու, ուժերը մոբիլիզացնելու և նրանց միջոցները առավել ռեալ օգտագործելու, քան նրանց մեկուսացնելու նպատակ։ Թաղիադյանը հայ ժողովրդի կուլտուր-տնտեսական հետագա զարգացման համար բուրժուական խավերից, բուրժուական ինտելիգենցիայից բացի այլ ուժ չէր տեսնում (և չէր էլ կարող տեսնել), ապավինում էր նրան և հավատում էր, որ նա կկարողանա խաղալ այն դերը, որն ինքը կապում է հայ բուրժուազիայի հետ։ Այս ամենին էլ Թաղիադյանի դասակարգային սահմանափակության հետևանք չէր։ Այդ ավելի շատ նրա պատմական ժամանակաշրջանի սահմանափակությունն էր, նրա ժամանակաշրջանի հայ իրականության, նրա միջավայրի արդյունքը։

Հայ ժողովրդի տնտեսական և կուլտուրական առաջադիմության գործում բուրժուական խավերին ներգրավելու, օտարամոլությունից և ասիմիլյացիայից ժողովրդին փրկելու կարևոր միջոցներից մեկը Թաղիադյանը համարում էր հայրենասիրության զգացումը։ Զգալով հայ ժողովրդի սրտում վառել հայրենասիրության կրակը, նա աշխատում էր սերմանել նրա մեջ այն գիտակցությունը, թե հայրենիքի և անհատի շահերը համընկնում ու փոխադարձաբար պայմանավորված են։ Անտեսելով հասարակության դասակարգերի բաժանումը (իհարկե ոչ գիտակցաբար), Թաղիադյանը գտնում էր, որ անհատը կարող է ձեռք բերել իսկական երջանկություն այն դեպքում, երբ ազատ ու անկախ է նրա հայրենիքը և ապրում է տնտեսական վի-

32 «Ազգասէր Արարատեան», 1843, № 9, էջ 66։

33 «Ազգասէր Արարատեան», 1851, № 66, էջ 522։

րելք։ «Ով կամի երջանիկ կալ,— գրում է նա,— նախ պիտի իր հայրենեաց երջանկութեան միտ դնի»[34]։

Ժողովրդի հայրենասիրության աստիճանը Թաղիադյանը սերտորեն կապում էր ազգային ինքնագիտակցության հետ։ Ելնելով դրանից, նա հայ ժողովրդի հայրենասիրությունը բարձրացնելու համար անհրաժեշտ էր համարում ծանոթացնել ժողովրդին անցյալի պատմության հերոսական էջերին ու կուլտուրային։ Այդ նպատակով իր գիտական-հասարակական գործունեությամբ, մամուլի միջոցով նա ձգտում էր ազգային հպարտության ու արժանապատվության զգացմունք բորբոքել հայ ժողովրդի լայն մասսաների մեջ, համոզված լինելով, որ այն մեծապես կնպաստի ժողովրդի համախմբմանը, պայքարելու և ազգային անկախությունը վերանվաճելու տրամադրությունների ուժեղացմանը։

Թաղիադյանը ամեն կերպ ձգտում էր օգնել այն բանին, որպեսզի ժամանակի ընթացքում Հայաստանից օտար երկրներ գաղթած հայերը պահպանեն իրենց ազգային առանձնահատկությունները, մինչև որ լայն հնարավորություն կստեղծվի վերադառնալ մայր հայրենիք։ «Ազգասէր»-ի էջերում նա գրում էր. «Մենք տեղիս, արմատական ծառեր չեմք, մեր արմատն մեր հայրենիքն այ, և եթէ չջանամք մի կամ միւս եղանակաւ մեր հայրենեաց երջանկութիւն հաստատել, կարելի չէ որ մեք երջանիկ ապրիմք»[35]։ Թաղիադյանը կոչ էր անում օտար երկրներ գաղթած հայությանը սիրել հայրենիքը, կապվել նրա հետ։ «Ազգ իմ,— գրում էր նա,— սիրեա զքեզ ինքն, փարեա զվսեմութեամբ նախահարց քոց, մարդասէր լեր, այլ մի բնաւ օտարասէր, զքեզ և զքոյսդ արհամարհելով»[36]։ Թաղիադյանը պայքարում էր ազգային նիհիլիզմի դեմ։ Հայրենասիրության, ազգասիրության նրա կոչը, սակայն, չէր կրում նացիոնալիստական բնույթ։ Այն արտահայտվում էր հումանիզմի, ժողովուրդների բարեկամության շրջանակներում. «մարդասէր լեր, այլ մի բնաւ օտարասէր», ընդգծում է Թաղիադյանը։

Այս տեսակետից ուշագրավ է Թաղիադյանի վերաբերմունքը եվրոպական երկրների գաղութային քաղաքականության նկատմամբ։ Նա քննադատել է Պորտուգալիայի, Ֆրանսիայի, մասնավորապես Անգլիայի գաղութային քաղաքականությունը Հնդկաստանում։ Նա ցույց է տալիս, թե ինչպես անգլիական պետությունը օգտագործում է բոլոր միջոցները (բռնի ուժով քրիստոնեության տարածում, պատերազմների և ներքին խլրտումների կազմակերպում, քաղաքակրթության տարածման խաբուսիկ լոզունգների օգտագործում և այլն) Հնդկաստանը թալանի և կողոպուտի ենթարկելու համար։ Նա մեծ հումանիստին հատուկ վշտով է արձանագրում այն փաստը, որ անգլիացիները հնդիկ ժողովրդին շահագործելով մեծ գումարներն են կորզում, մինչդեռ ոչինչ չեն ծախսում Հնդկաստանի բազմաթիվ ժողովուրդների կենսական մակարդակի և կրթության բարձրացման վրա[37]։

Նրա պարբերականի էջերում շատ անգամ կարելի է հանդիպել գաղութային քաղաքականության և «քաղաքակրթված» պետությունների թույլ տված գազանությունների վերաբերյալ դիպուկ, խիստ դարձվածքների[38]։

Գնահատելով եվրոպական քաղաքակրթված ազգերի բարձր կուլտուրան, Թաղիադյանը, սակայն, դեմ էր պատմականորեն հետ մնացած ժողովուրդների արժանիքների նսեմացմանը։ Նա բարձր էր գնահատում չին և հնդիկ ժողովուրդների անցյալի բարձր կուլտուրան և նրանց ներդրումը մարդկության առաջընթացի գործում։ «Ազգիս այսմիկ պարտի աշխարհ ամենայն զգիտութիւնն ձեռակերտաց մետաքսի, շաքարի, յախճապակւոյ, վառօդի և նաւորդական կողմնացոյցի»[39],—գրում է Թաղիադյանը։ Իր պարբերականի էջերում նա հարց է բարձրացնում հնդկական կուլտուրայի հուշարձանները պահպանելու մասին։

Թաղիադյանը հավատում էր, որ գաղութային ստրկացման ենթարկված ժողովուրդները ընդմիշտ չեն մնալու այդ դրության մեջ։ Նա տեսնում էր, որ Հնդկաստանի այս ու այն կողմերում անգլիացիների դեմ բռնկված ելույթները, ժողովրդի ընդհանուր դժգոհությունը գաղութային լծից գնալով ուժեղանում է և մի օր կվերածվի անկախության ու ազատության համար մղվող համաժողովրդական, ընդհանուր պայքարի։ Հաղորդելով Փանջաբի ապստամբների նկատմամբ անգլիացիների տարած հաղթության լուրը, Թաղիադյանը կցում է հետևյալ

---

34 «Ազգասէր», 1845, № 18, էջ 139։

35 Նույն տեղում։

36 Նույնը, 1847, № 109, էջ 293։

37 Տե՛ս «Ազգասէր Արարատեան», 1849, № 27, էջ 215։

38 Տե՛ս «Ազգասէր Արարատեան», 1849, № 28, էջ 221 և այլն։

39 «Ազգասէր», 1847, հատ. Ր, էջ 64։

ծանոթությունը. «Աչք Հնդկաց բաչան և պարտ է Տերութեան (անգլիական—Գ. Գ.) այսուհետև զգոյշ կալ։ Ապա թե ոչ, օրինակ Ամերիկա աւրնթեր կա նոցա։ Այն վաղ էր, զի ժողովուրդք ընդ բոմբրիւն թնդանօթաց զտրհուրեալք և ահաբեկեալ լինէին։ Այժմ կարէ Հնդկաստան և թնդանօթ յօրինել և զվառօդ ընտիր»[40]։ Շատ որոշակի է արտահայտված այստեղ Թաղիադյանի միտքը և նրա համակրանքը ապստամբ ժողովուրդների կողմն է։

Հայրենասիրության կոնկրետ դրսևորումը Թաղիադյանը տեսնում էր հայրենիքի առաջադիմությանը գործնական օգնություն ցույց տալու պատրաստակամության մեջ։ Այդպիսին է եղել նրա կյանքը։ Մոռանալով իր անձնական շահերը, նա անկաշառ կերպով իր ամբողջ կյանքն ու ուժերը նվիրեց հայ ժողովրդի լուսավորության, նրա ազգային ինքնագիտակցության բարձրացման գործին։ Թաղիադյանը իր աշխատություններում գեղարվեստական ստեղծագործության մեջ հաճախ է արտահայտել իր ջերմ հայրենասիրությունը, գրելով, որ հայրենիքին ծառայելը իր կյանքի միակ նպատակն է։ «Եթե ես վասն ապրուստի իմոյ հոգայի, ինչ զիմս այլոց ոչ տայի և բաւական էր,— գրում է նա իր նամակներից մեկում։— Եւ թէ զպարապութիւն զհանգիստ սիրեի՝ ահաւասիկ զերկուսին ևս ունիմ ի մեզմ և ի թուլամորթ քաղաքի այսմիկ։ Բայց չէ, կամիմ, եթե կեամ, պիտանի լինել Ազգի իմում և եթե մեռանիմ՝ ի մեջ Ազգիս մեռանիլ»[41]։ Իսկ Երևանցիներին ուղարկած հայտնի նամակում նա գրում էր, որ պատրաստ է իր կյանքն ու գիտելիքները նվիրել իր հայրենիքի տնտեսական ու կուլտուրական բարգավաճման համար։ «Ես ուրախ կլինեմ ապրիլ ձեզ համար և մեռնել ձեզ համար»[42],—գրում էր նա։ Թաղիադյանի այս խոսքերը բարձրագոչ խոսքեր չեն իր հասցեին, դրանց ճշմարտությունն է ապացուցում նրա ողջ, պայքարով և չարչարանքներով լի, կյանքը։

Թաղիադյանի ջերմ հայրենասիրության մասին գրել է մեր մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որը Թաղիադյանի հայրենասիրությունը համեմատում է մեր մեծ լուսավորիչ-դեմոկրատ Արովյանի կրքոտ հայրենասիրության հետ, նրանց կյանքի ու հայրենիքի համար պայքարի մեջ շատ նմանություններ տեսնելով[43]։

Թաղիադյանի հայրենասիրությունը տոգորված էր վառ օպտիմիզմով։ Նա ջերմ հավատով էր լցված իր հայրենիքի լավագույն ապագայի նկատմամբ։ Նա գիտակցում էր, որ հայ ժողովուրդը հավերժ չի կարող և չի մնա տգիտության, աղքատության ու հետամնացության մեջ, որ կգա այն օրը, երբ նա կկանգնի աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների կողքին և իր լուման կունենա ժողովուրդների ընդհանուր զարգացման գործում, միայն թե պետք չէ ձեռքերը ծալած նստել և սպասել այդ երանավետ օրվան, այլ պետք է դրա համար ակտիվ պայքար ծավալել, ուղիներ որոնել տգիտությունից, հետամնացությունից դուրս գալու և ազգային անկախություն նվաճելու համար։

---

40 «Ազգասէր», 1847, էջ 163։

41 Մ կ ր ե ա ն, Կենսագրութիւն Մ. Դ. Թաղիադեանց Երևանցւոյ, էջ 37 (Նամակը գրված է 1857 թ. մայիսի 27)։

42 Նույն տեղում, էջ 127։

43 Տե՛ս Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 267—268։